

2015 թվականի հունիսի 10-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշումը, որով 2015 թվականի հուլիսի 1-ից զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը կկազմի 16000 դրամ՝ գործող 14000 դրամի փոխարեն, իսկ զինծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1500 դրամ՝ 1300 դրամի փոխարեն:

Արդյունքում, 2015 թվականի հուլիսի 1-ից զինվորական կենսաթոշակի միջին չափը կաճի շուրջ 14 տոկոսով, այդ թվում՝

1) երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի միջին չափը կկազմի շուրջ 89000 դրամ՝ 78000 դրամի փոխարեն (աճը՝ 14,0 տոկոս),

2) կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի միջին չափը կկազմի 44000 դրամ՝ 37000 դրամի փոխարեն (աճը՝ 18 տոկոս),

3) սպայական անձնակազմի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի միջին չափը, ըստ հաշմանդամության խմբերի, կկազմի՝

ա. 1-ին խմբի հաշմանդամների համար՝ 41 000 դրամ՝ 35000 դրամի փոխարեն (աճը՝ 17 տոկոս),

բ. 2-րդ խմբի հաշմանդամների համար՝ 34000 դրամ՝ 29000 դրամի փոխարեն (աճը՝ 17 տոկոս),

գ. 3-րդ խմբի հաշմանդամների համար՝ 22000 դրամ՝ 19000 դրամի փոխարեն (աճը՝ 16 տոկոս):

Միաժամանակ, շարքային անձնակազմի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի միջին չափը, ըստ հաշմանդամության խմբերի, կկազմի՝

ա. 1-ին խմբի հաշմանդամների համար՝ 36000 դրամ՝ 31500 դրամի փոխարեն (աճը՝ 14 տոկոս),

բ. 2-րդ խմբի հաշմանդամների համար՝ 26000 դրամ՝ 23100 դրամի փոխարեն (աճը՝ 12 տոկոս),

գ. 3-րդ խմբի հաշմանդամների համար՝ 18000 դրամ՝ 15750 դրամի փոխարեն (աճը՝ 14 տոկոս):

Վերը նշված բարձրացումների համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցների մի մասը նախատեսված է 2015 թվականի ՀՀ պետական բյուջեով, իսկ մի մասը (շուրջ 1 մլրդ դրամ) նախատեսվում է ֆինանսավորել ոլորտում իրականացվող վարչարարության արդյունքում ձևավորված ներքին խնայողությունների հաշվին:

Հիշեցնենք, որ 2014 թվականի հուլիսի 1-ից վերանայվել է զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը, որի շրջանակներում 2014 թվականի հուլիսի 1-ից զինվորական կենսաթոշակների միջին չափերը ևս ավելացել էին՝ շուրջ 15 տոկոսով:

Վերջին տարիներին զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական վիճակի շարունակական բարելավումը եղել է ՀՀ կառավարության առաջնահերթություններից:

Ըստ այդմ, վերջին տարիներին շարունակական բնույթ է կրել առանձին կատեգորիայի զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող պարգևավճարների (մինչև 2015 թվականի հունվարի 1-ը՝ դրամական օգնություն) չափերը:

Մասնավորապես, վարվող քաղաքականությունը, նախևառաջ, միտված է եղել զոհված (մահացած) զինծառայողներին ընտանիքների անդամներին: **2011 թվականի սեպտեմբերի 1-ից** զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող դրամական օգնության չափը, 10000 դրամի փոխարեն, սահմանվեց 30000 դրամ, որին տրվում է հավելում՝ զոհված զինծառայողի երեխայի համար՝ 20000 դրամ:

Պարբերաբար բարձրացվել են նաև.

1) զոհված (մահացած) զինծառայողների՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին տրվող պարգևավճարի չափը. **2011 թվականի հունվարի 1-ից՝** 30000 դրամ, **2013թ. հունվարի 1-ից՝** 33000 դրամ, **2014թ. օգոստոսի 1-ից՝** 38000 դրամ:

2) զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի՝ կենսաթոշակ ստացող այլ անդամին տրվող պարգևավճարի չափը, **2011 թվականի հունվարի 1-ից՝** 23000 դրամ, **2013թ. հունվարի 1-ից՝** 26000 դրամ, **2014թ. օգոստոսի 1-ից՝** 31000 դրամ:

Հաջորդ կարևորագույն թիրախային խումբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս

հաշմանդամ դարձած զինծառայողներն են, որոնց տրվող պարգևավճարների չափերը ևս պարբերաբար բարձրացվել են՝ ըստ հաշմանդամության խմբերի, կազմելով.

1) առաջին խմբի հաշմանդամների համար. **2011 թվականի հունվարի 1-ից՝** 50000, դրամ, **2014թ. օգոստոսի 1-ից՝** 55000 դրամ,

2) երկրորդ խմբի հաշմանդամների համար՝ **2011 թվականի հունվարի 1-ից՝** 43000, դրամ, **2014թ. օգոստոսի 1-ից՝** 48000 դրամ,

3) երրորդ խմբի հաշմանդամների համար՝ **2011 թվականի հունվարի 1-ից՝** 31000, դրամ, **2014թ. օգոստոսի 1-ից՝** 36000 դրամ:

Միաժամանակ, պարբերաբար բարձրացվել են նաև զինվորական կենսաթոշակ ստացող՝ Հայրենական մեծ պատերազմի նմանակցելու հետևանքով հաշմանդամ դարձած անձանց տրվող պարգևավճարների չափերը, կազմելով.

1) **2011 թվականի հունվարի 1-ից.** 1-ին խմբի հաշմանդամի համար՝ 22000 դրամ, 2-րդ խմբի հաշմանդամի համար՝ 18000 դրամ, 3-րդ խմբի հաշմանդամի համար՝ 13000 դրամ,

2) **2011 թվականի սեպտեմբերի 1-ից. 1-ին խմբի հաշմանդամի համար՝ 27000 դրամ,** 2-րդ խմբի հաշմանդամի համար՝ 23000 դրամ, 3-րդ խմբի հաշմանդամի համար՝ 18000 դրամ,

3) **2014թ. օգոստոսի 1-ից.** 1-ին խմբի հաշմանդամի համար՝ 32000 դրամ, 2-րդ խմբի հաշմանդամի համար՝ 28000 դրամ, 3-րդ խմբի հաշմանդամի համար՝ 23000 դրամ:

2015 թվականի մայիսի 1-ից Հայրենական մեծ պատերազմի վետերանների պատվովճարի չափը կազմում է 50000 դրամ՝ 25000 դրամի փոխարեն:

Հարկ է նկատի ունենալ, որ վերը նշված բարձրացումներն ամբողջությամբ ֆինանսավորվել են ներքին խնայողությունների հաշվին: